նունը. «զՍարգիս գրիչ առ քս. յիշեայ» 723բ., բայց առանց մասնակցելու գրչութեան։ Արդեո՞ք սա այն Սարգիսն է, որին Յովհաննէս Դառնեցին ուղղել է իւր խրատական գրութիւններից մէկը, ասել չենք կարող։ Մասնակից չէր գրչութեան նաև Ստեփանոս սարկաւագ, որի անունը Մխիթարի և Սարգսի հետ յիշուած է 270բ. առանձին առանձին բոլորակների մէջ. «զՍարգիս տր. յիշէ», «Ո տր. Մխ. վդ. յիշէ ի տր.», «զՍտեփանոս սարկաւագ յիշէ ի տր.»։ Մի այլ տեղ՝ 74բ. դարձեալ լուսանցքում, բոլորակի մէջ գրուած է. «Վանական վդի. աւրինակեալ է», Ժամագրքի վերնագրի դիմաց (Գիրք աղաւթից, զոր ա-բարել սբ. հարցն Սահակա և Մեսրոբա), որ նշանակում է, թէ Մխիթարի կամ նորանից առաջ գրուած օրինակը կատարուած էր Վանական վարդապետի ձեռքով. այդ նկատողութիւնն էլ գրուած է Մխիթարի ձեռքով։ Ընդարձակ յիշատակարան գրչի կողմից չունինք, այդ վերջում կը լինէր, գուցէ մանրամասնութիւններով Պռոշ իշխանի եւ նորա տոհմի, վանքի եւ իւր անձի մասին, որ ընկած է. բայց բազմաթիւ են մանր յիշատակարանները (տ. Ցաւել. Գ. 7), որոնք ցոյց են տալիս, թէ գրիչն ու ստացողը Մխիթարն է։ Ահա դոցանից մի քանիսը. 7բ. Յովհաննու աւետարանի վերջում. «Աւգնեայ յս. և ողորմեայ տր. Մխիթար վդիս., գրչողիս և ստացողիս ածաչունչ. սբ. կտակիս յառաջին աստիճանիս». Գործոցի վերջում. 40ա. «Որոց աղաւթաւքն (s!) ողորմեսցի քս. ած. տր. Մխ. վդիս. գծողի և ստացղի»։ 763ա. «Ահնել է ած., որ ահնէ. զտր. Մխ. վդ. ծուպտիչ գրոցս։ 976ա. քս. ած. քաւիա զմիղս տր. Մխ. վդիս.»։ Ուշադրութեան արժանի է զաւառաբարբառի ազդեցութիւնը վերջին յիշատակարանի մէջ, որ նման է Տփխիսի Հաւլաբարցոց բարբառին, իսկ նրանք մասամբ Երևանից են այնտեղ գաղթել(*)։

Զունինք գրչութեան թուականը, բայց կարող ենք որոշել գրութեան մօտաւոր ժամանակը. Պատարագի արարողութեան «Փոհութիւն եւ փառաբանութիւն» քարոզի մէջ յիշուած են ժամանակակից կաթուղիկոսի, հայ և վրացի թագաւորների անունները. 79ա. «եկեղեցո իւրում սրբո եւ ա. ուղղափառ եպ. հայրապետին հայոց տն. Յակ. եւ մերո արհի եպիսկոպ. տր. Մխ., որ զպատ։ եւ վս. զաւրութե. եւ յաղթութե. թագաւորաց քրիստոնէից եւ իշխանաց բարեպաշտից. քաղաւր արքային Լեւոնի եւ Դեմետրէի. եւ ա. զօրագլխաց եւ զաւրաց նոցին. ազատութի. եղբարց»..։ Կաթուղիկոսի անունը յիշուած է նաեւ «Աստսցուք»ի մէջ. «Վս. հայրապետին մերո տն. Յակոբա կենաց եւ փրկութե. զտր. . . .»։

Յակոբ Կլայեցու կաթողիկոսութեան տարիներն են 1268–1287, Լեւոնի թագաւորութեանը 1270–1288 և Դեմետրէինը 1272–1289. ասել է, թէ ձեռագիրը գրուած է 1272–1287 թ. թ. մէջ(*)։ Այս վկայութիւնից պարզւում է նաև, որ Մխիթար Այրիվանեցին արքեպիսկոպոս վարդապետ էր. հայ եկեղեցու մէջ միջին դարերում «վարդապետութիւնը» մի տեսակ գիտնական աստիճան էր, որ ստանում էին աւագագոյն վարդապետ-վարժապետից, երկար տարիներ նորան աշակերտելուց և որոշ հմտութիւն և պատրաստութիւն ձեռք բերելուց յետոյ. սովորական էր եպիսկոպոսների, երբեմն մինչեւ իսկ կաթուղիկոսների համար վարդապետ տիտղոսով կոչուիլ. այս մասին առիթ կ'ունենանք Գլաձորի դպրոցին նուիրուած գլխի մէջ աւելի կանգ առնել։ Այրիվանեցու ձեռագիրը



Պատկեր 162.

անհերքելի ապացոյց է և մի ուրիշ իրողութեան, թէ նորա ժամանակ վանքը պէտք է ընդարձակ մատենադարան ունենար եւ ժամանակի հասկացողութեամբ գիտնական միաբաններ, որ հնարաւոր եւ հարկաւոր

(*) Գանձարանների մէջ երբեմն Մխիթարը Երևանեցի է կոչւում. օր. № 75 նժ. 45ա. «ի Մխիթարայ Երևանեցոյ սրբոց անապատաւորացն». կամ 90ա. որի Acr.-ն է «Երեւանեցին»։ Մանրամասնութիւնները տ. Ցաւել. Գ. 7։

(*) Այս թուերի հշման փաստերն ու վկայութիւնները տես մեր «Մխիթար Այրիվանեցի» ևն. տետրակի մէջ. երես 4, ծանօթութիւնները։